ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՈԼՈՐՏՈՒՄ 2014թ. ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Մարզում գործում է 50 հանրակրթական դպրոց, որոնցից 15 հիմնական, 35 միջնակարգ, որոնցից 2 վարժարան 3 ավագ դպրոց ՀՀԿԳ նախարարության ենթակայությամբ: 5 դպրոց գտնվում է սահմանամերձ գոտում, 5-ը բարձր լեռնային բնակավայրերում: Գործում է 1 ԲՈՒՀ (Տնտեսագիտական համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղը) և Եղեգնաձորի պետական քոլեջը: Քաղաքային և գյուղական համայնքներում գործում է 17 մանկապարտեզ, 24 նախակրթարան:

Համայնքների ղեկավարների, մարզային վիճակագրական ծառայությունների և ՋԱԳՍ-ի բաժինների հետ համագործակցելով տարվել է դպրոցահասակ երեխաների հաշվառում: Այն կազմում է 5871 աշակերտ: Հանրակրթությունից դուրս մնացած երեխաներ չունենք :

Մարզային ենթակայության 47 դպրոցներում կոմպլեկտավորված է 442 դասարան: 47 դպրոցներում աշխատում են 983 ուսուցիչներ, որոնցից 851-ը ունեն բարձրագույն կրթություն (86%), մնացածը ունեն միջնակարգ մասնագիտական կրթություն:

Ուսուցիչ աշակերտ հարաբերակցությունը 1:6, դասարանի միջին խտությունը 13, ուսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը 17 ժամ:

Մարզի հանրակրթական դպրոցների մեծ մասը՝ մոտ 80%, վերանորոգված են: Մարզի բոլոր դպրոցները ապահովված են համակարգիչներով, շուտով բոլոր դպրոցներին կտրվեն նոր համակարգիչներ: Դպրոցների լաբորատոր սարքավորումներով համալրումը կատարվում է հիմնականում <<Փյունիկ>> բարեգործական հիմնադրամի միջոցով, որի համար մենք հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

Մարզպետարանի կրթության վարչությունը համագործակցում է ԿԳ նախարարության և Կրթության ազգային ինստիտուտի հետ: Տարբեր առարկաների գծով իրականացրել է 117 ուսուցիչների վերապատրաստում և ատեստավորում:

Հաշվետու ժամանակահատվածում ամբողջությամբ լուծվել է դասագրքերով ապահովվածության խնդիրը, վարձավճարները հավաքագրվել են 98%: Դպրոցներում հաջողությամբ ներդրվել է շախմատ առարկան, բոլոր դպրոցները ապահովված են անհրաժեշտ գույքով և դասագրքերով:

Վարչությունը սահմանված կարգով համագործակցելով ԿԳ նախարարության հետ անցկացրել է տարվա լավագույն <<ուսուցիչ>>, <<տնօրեն>>, <<դաստիարակ>> մրցույթները: Դրանց արդյունքները նա-խարարությունում ափոփվել են սեպտեմբերի վերջին:

Հաշվետու ժամանակաշրջանում մեր լավագույն ձեռքբերումներից է նախակրթարանների բացումը մարզի մի քանի համայնքներում: Այս տարի դրանք ավելացան ևս երեքով՝ Ջերմուկում, Կեչուտում և Եղեգնաձորում:

Լավագույնս է իրականացվում դպրոցականների առարկայական օլիմպիադաների կազմակերպումը: Այն անցկացվել է ԿԳ նախարարության սահմանած ժամանակացույցով: Օլիմպիադաներին մասնակցել են շուրջ 800 աշակերտներ տարբեր առարկաներից, բոլոր հաղթողները մարզպետի կողմից պարգևատրվել են դիպլոմներով, որոնք հանդիսավորությամբ հանձնվել են դպրոցներում: 30-ից ավել աշակերտներ մասնակցել են հանրապետական փուլին և նրանցից 7-ը արժանացել են դիպլոմների և գովասանագրերի:

Մարզպետարանը ակտիվորեն համագործակցում է տարբեր հասարակական կազմակերպությունների հետ և ստորագրվել են համագործակցության հուշագրեր: Ժողովրդավարական կրթության կենտրոն Սիվիտաս ՀԿ-ի հետ կատարվել են մեծածավալ աշխատանքներ: Մարզի դպրոցներում կրթության ժողովրդավարական կառավարման մարտահրավերները թեմայով անցկացվել են սեմինարներ: Վայոց ձորի մարզը համագործակցում է Ռուսաստանի Դաշնության Արխանգելսկի և Նիժնի Նովգորոդի նահանգների հետ: Այդ համագործակցության շրջանակներում կազմակերպվել են նաև կրթամշակութային միջոցառումներ: Համագործակցության արդյունքում հաշվի առնելով Մալիշկայի N2 և Ջերմուկի N1 դպրոցների մանկավարժական կոլեկտիվների խնդրանքը Վայոց ձորի մարզպետի որոշմամբ Մալիշկայի N2 դպրոցը անվանակոչվել է Մ.Վ. Լոմոնոսովի անվամբ, իսկ Ջերմուկի N1-ին դպրոցը Մաքսիմ Գորկու անվամբ:

Անցած տարում մասնակցել ենք <<Երգը բարեկամության կամուրջ է>> ռուսական երգի փառատոնին: Փառատոնը կազմակերպվել է Հայերի համաշխարհային միության նախաձեռնությամբ՝ մեր հայրենակից Ա. Աբրահամյանի հովանավորությամբ: Այդ փառատոնում Մալիշկայից Զոյա Սարգսյանը արժանացավ դափնեկրի կոչման:

Հաջողությամբ սկսվեց <<Կայուն դպրոցական սնունդ >> ծրագիրը: 2014թ-ի սեպտեմբերի 1-ից Վայոց ձորի մարզի բոլոր հանրակրթական դպրոցների 1-4-րդ դասարանների երեխաները դպրոցում ստանում են սնունդ: Սկզբնական շրջանում հյութերի և թխվածքաբլիթի տեսքով հետագայում կփոխարինվի տաք ճաշերով:

Դժբախտաբար տարեց տարի օբյեկտիվ թե սյուբեկտիվ պատճառներով պակասում է աշակերտների թիվը, որը բացասաբար է անդրադառնում ամբողջ ուսումնական գործընթացի վրա:

Մարզում մինչև 50 աշակերտ ունեցող դպրոցները 17-ն են , իսկ 50-100 աշակերտ ունեցող դպրոցները 11-ն են, որտեղ կազմավորվում են երկկոմպլեկտ դասարաններ: Թերկոմպլեկտավորված դասարաններում անհնարին է կազմակերպել նորմալ ուսումնական գործընթաց: Հիշյալ դպրոցներում անհնար է ուսուցիչներին վարձատրել սահմանված դրույքաչափերով և նորմատիվներով:

Վերջին ժամանակներում ԿԳ նախարարության տեսչության կողմից, որից հետո ՀՀ վայոց ձորի մարզպետի կողմից, ստեղծվեցին հանձնաժողովներ, դպրոցներում կատարելու ուսումնասիրություններ:

Կազմակերպեցին քննարկումներ, տրվեցին հանձնարարականներ, զգուշացվեցին դպրոցների տնօրենները: Քննարկումներին հրավիրվեցին առարկայական ուսուցիչներ հ. լեզվից և մաթեմատիկայից:

Ներդրվել և աշխատում է Dasaran.am ծրագիրը: Սակայն որոշ դպրոցներում կապի խափանման պատճառով ծրագրում մուտքագրման աշխատանքները երբեմն ընդհատվում են:

ՄՇԱԿՈՒՅԹ

Մարզային ենթակայությամբ գործում է Եղեգնաձորի մշակույթի տունը, Եղեգնաձորի երաժշտական դպրոցը, Եղեգնաձորի երկրագիտական թանգարանը:
ՀՀ մշակույթի նախարարության ենթակայությամբ գործում է մարզային գրադարանը և Հայաստանի պետական պատկերասրահի Եղեգնաձորի և Ջերմուկի մասնաճյուղերը:
Համայնքային ենթակայությամբ գործում է 42 գրադարան և 36 մշակույթի տուն, 4 արվեստի դպրոց, 1 գեղարվեստի դպրոց, 2 մանկական ստեղծագործական կենտրոն:
Ստորև ներկայացվում է մշակույթի ոլորտում անկացված միջոցառումները:

1. <Պարարվեստի> – փառատոն---Եղեգնաձոր
2. <Երգչախմբային> – փառատոն---Վայք
3. <Եղեգան փող> – աշուղա-գուսանական փառատոն--Եղեգնաձոր
4. <Ասմունքի> – փառատոն—Ջերմուկ, Վայք, Եղեգնաձոր
5. <Ռուսական երգի> – փառատոն—Ջերմուկ,Վայք, Եղեգնաձոր
6. <Հեղինակային երգի> փառատոն--Եղեգնաձոր
7. <Երաժշտության օր>--- Եղեգնաձորի ամֆիթատրոն
8. Կինոփառատոն—Եղեգնաձորի մշակույթի տուն
9. Պետական տոների նշում—մարզի քաղաքներ
10. Ազգային տոների նշում—մարզի համայնքներ

11. Մասսայական միջոցառումներ—մարզի համայնքներ
12. Թատերական շաբաթ-Վայոց ձորի համայնքներ
13. Հոգևոր երգի փառատոն--Նորավանք
14. <Երիտասարդական հավաք > փառատոն ---Սիրանույշ ճամբար,մարզկենտրոն
15. Հոբելյանական տարելիցների նշում
16. <<Աշնանային Վայոց ձոր>> նկարչական ցուցահանդես—Երկրագիտական թանգարան
17. <<Երգի և բերքի>>տոն --Եղեգնաձոր
18. <<Գինու տոն>> --Արենի
19. <<Համայնքների տոն>>--/Մալիշկա,Ելփին,Ռինդ, Արենի,Եղեգնաձոր/
20. <<Վայոց ձորը վայոց ձորցիների աչքերով>>--մանկական նկարչական ցուցահանդես

ՍՊՈՐՏ

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի, ՀՀ ԿԳ նախարարությունների կողմից ուղարկված կանոնակարգերի և մարզպետի կողմից մարզական միջոցառումների կազմակերպման և անցկացման մասին ընդունած որոշումների հիման վրա մարզում անցկացվում են սպորտային տարաբնույթ միջոցառումներ:

Մարզում գործող ուսումնական *հաստատությունների* 88 տոկոսը ունեն մարզադահլիճներ, իսկ մնացած ուսումնական հաստատությունները ֆիզկուլտուրայի դասաժամերը անցկացնում են հարմարեցված դասասենյակներում, բոլոր ուսումնական հաստատությունները ունեն մարզահրապարակներ:

Նախազորակոչային և զորակոչային տարիքի պատանիների ֆիզպատրաստականությունը կազմակերպվում է հանրակրթական դպրոցներում ՀՀ կառավարության կողմից սահմանված պետական ծրագրով: Ամեն տարի մարզի ուսումնական հաստատություններում կազմակերպվում են ռազմամարզական խաղեր նախազորակոչային և զորակոչային *տարիքի* երիտասարդության մասնակցությամբ: 2014թ. ռազմամարզական խաղերին մասնակցել են 930 երիտասարդներ: Վերջին երեք տարիներին նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդական ռազմամարզական խաղերի հանրապետական եզրափակիչ փուլերում Արենիի միջնակարգ դպրոցի թիմը հաղթելով բոլոր մրցակիցներին երկու տարի անընդմեջ գրավեց առաջին տեղը և հռչակվեց ՀՀ նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդական խաղերի Հայաստանի չեմպիոններ: Իսկ 2014թ. թիմը գրավեց երկրորդ տեղը: Թիմի բոլոր անդամները մարզպետի և համայնքի ղեկավարի կողմից *արժանացան* թանկարժեք նվերների, սպորտային կոստյումների և պատվոգրերի: Ուսումնական տարվա ընթացքում նախազորակոչային և զորակոչային *տարիքի*

թվականի կատարված աշխատանքների շնորհիվ ավելացել են ՀՀ Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթի մասնակից ընտանիքների քանակը, հասնելով108-ի:

Մարզում պարբերաբար իրականացվում են միջոցառումներ և ծրագրեր,որոնք ուղղված են երիտասարդության խնդիրների և հիմնահարցերի լուծմանը:

Հոկտեմբերի 1-3ը անցկացվեց ուսանողական և երիտասարդական մարզամշակութային փառատոն, որին մասնակցեցին ավելի քան 170 երիտասարդներ: Ծրագրում ընդգրկված էր՝ վոլեյբոլ, շախմատ, թենիս, երգ, պար, ասմունք, <<Ձեզ տեսնենք աղջիկներ>>,<<Բրեյն ռինգ>> ինտելեկտուալ մրցույթները:

Յուրաքանչյուր չորեքշաբթի մարզային երիտասարդական կենտրոնում երիտասարդների նախաձեռնությամբ իրականացվում են ինտելեկտուալ մրցույթներ, որոնք նպաստում են երիտասարդության ինտելեկտուալ մակարդակի բարձրացմանը, մրցույթներին մեծ սիրով մասնակցում է նաև մարզպետը:

Արդեն ավանդույթ է դարձել, և երեք օր տևողությամբ Եղեգնաձոր քաղաքում իրականացվեց երիտասարդ արվեստագետների բացօթյա ցուցահանդես: Տաղանդավոր երիտասարդները հնարավորություն ունեցան ցուցադրելու իրենց աշխատանքները հանրությանը, ավելի ճանաչելի դառնալու և կիսելու իրենց փորձը ավելի փորձառու արվեստագետների հետ: Աչքի ընկած երեք երիտասարդներ մասնակցեցին Գյուրիում կազմակերպված նկարչական երրորդ պլեներին:

Մարզում կան շատ ակտիվ ՀԿ-ներ, որոնք իրենց գործունեությամբ և ակտիվությամբ նպաստում են մարզի համայնքներում սոցիալ տնտեսական զարգացմանը և մարզամշակութային միջոցառումների կազմակերպմանը: Այդ ՀԿ-ներից երեք լավագույնները ներկայացվել են Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից անցկացվող <<Լավագույն մարզային երիտասարդական կազմակերպություն>> մրցանակաբաշխությանը, <<Ջերմուկի զարգացման կենտրոն>>,<<Ընդդեմ՝ իրավական կամայականության>> <<Վայքի քաղաքացիական կենտրոն>> և <<Սոցիալ հոգեբանական և վիճակագրական հետազոտությունների կենտրոն>> ՀԿ-ները:

Ստեղծվել է մարզպետին կից երիտասարդական խորհուրդ, որը պատրաստ է աջակցելու և կյանքի կոչելու երիտասարդների կողմից առաջադրված յուրաքանչյուր ծրագիր և առաջարկություն:

Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի

կրթության վարչության պետ Ա. Ղազարյան